ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2025 թվականի N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱԿՈԲ ԱԼԵՔՍԱՆԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ (ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ՀԱԿՈԲ ԱԼԵՔՍԱՆԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԱԾ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ) ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՎՃԻՌՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱԳՈՄԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի վճիռը և հաշվի առնելով, որ ըստ օրենքի Հակոբ Ալեքսանի Սարուխանյանի ժառանգությունը ընդունած Կարեն Հակոբի Սարուխանյանը, իր 2025 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումի համաձայն ընդունել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-045-0122-0005 կադաստրային ծածկագրով 0.016575 հեկտար հողամասը ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-045-0122-0005 կադաստրային ծածկագրով 0.016575 հեկտար հողամասը, որի վրա գտնվող անասնագոմը Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով ճանաչվել է Հակոբ Ալեքսանի Սարուխանյանի (Ըստ օրենքի Հակոբ Ալեքսանի Սարուխանյանի ժառանգորդ Կարեն Հակոբի Սարուխանյանի) սեփականությունը, ուղղակի կարգով ***23536 (քսան երեք հազար հինգ հարյուր երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով,*** Կարեն Հակոբի Սարուխանյանին (Ն.Ք.՝ 009412644, տրված՝ 08.06.2018թ, 016-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Տիմիրյազև, 29) վաճառելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (14)	**Դեմ՝ (0)**	**Ձեռնպահ՝ (0)**
ԴԱՆԻԵԼՅԱՆ		
ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ		
ՀԱՅԿՅԱՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Զ.		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.		
ՄԱՆՈՒԿՅԱՆ Կ.		
ՄԱՐԳԱՐՅԱՆ		
ՄԵԼԻՔՅԱՆ		
ՄԵԼՔՈՆՅԱՆ		
ՆԵՐՍԻՍՅԱՆ		
ՇԱԲՈՅԱՆ		
ՎԱՐԴԱՆՅԱՆ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«09» սեպտեմբերի 2025 թվական
գյուղ Աշոցք